


# ԳԵՏԱՅԻՆ ՋՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## Լրացուցիչ գործնական աշխատանք

1. Պնդումների փունջ

**Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ:**

ա) Գետի ջրի մակարդակի բարձրացումը սպասված ժամանակահատվածում կոչվում է վարարում:

բ) Սելավը սովորաբար առաջանում է խոնավ կլիմա ունեցող երկրներում:

գ) Հայկական լեռնաշխարհի գետերը հորդանում են գարնանը:

դ) Գավառագետի վրա կառուցվել է ջրաէլեկտրակայանների կասկադ:

ե) Ծալիաբեկորավոր շրջաններում գետաջրերեի հանքայնացման աստիճանը ավելի բարձր է, քան հրաբխային շրջաններում:

զ) Գետի ջրի կայուն մակարդակը անվանում են էրոզիայի հիմնամակարդակ:

2. Գանգեսի երկարությունը 2700 կմ է, ջրահավաք ավազանի մակերեսը՝ 1060 հազ. քառ. կմ, բազմամյա միջին ծախսը՝ 38000մ$^3$ / վրկ:

***Որոշե՛ք***

ա) Գանգեսի ամսական հոսքը

բ) հոսքի մոդուլը:

3. Ո՞ր գետի ջրաէներգետիկական ներուժն է ավելի մեծ

ա) Միւրեյ

բ) Կոլումբիա

գ) Օբ

դ) Նեղոս

4. Աշխարհի էլեկտրաէներգետիկայի քարտեզի վրա թվերով նշված են խոշոր ջրամբարներ և ջրաէլեկտրակայաններ: Գրեք դրանց անվանումները.

| Աշխարհի էլեկտրաէներգետիկան | | |
|---|---|---|
| Ջրամբարներ | Ջրաէլեկտրակայաններ | Ջրէկ-ների հզորությունը՝ կվտ |
| 1.<br>2.<br>3.<br>4.<br>5.<br>6. | 1.<br>2.<br>3.<br>4.<br>5.<br>6. | 1.<br>2.<br>3.<br>4.<br>5.<br>6. |